# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Հակոբյանը, Մեխակ Մեխակյանը, Վարդան Սամսոնյանը, Էդիկ Տիգրանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Արման Միքայելյան, Արգամ Մուրադյան, Պապին Վարդանյան, Հակոբ Բաբայան, Հասմիկ Մելքումյան, Լուսինե Չոբանյան, Մարոզ Սարիբեկյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը**

**Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Հասմիկ Մելքումյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի ավագանու հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ
4.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
5.Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանման և վերանվանման մասին
6. Հողամասերի օտարման,վարձակալության կամ կառուցապատման իրավունքով

համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 49 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԱՐՈՂ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը,համաձայն հավելվածի՝

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՂՈՒԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին *որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Ակունք համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ն/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի ավագանին՝որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04/

Լսեցին

*ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության2011թվականի դեկտեմբերի29-ի թիվ 1918-Ն,թիվ1920-Ն որոշումները,Հայաստանի Հանրապետության վարչապետի2001 թվականի օգոստոսի 03-ի թիվ 599 որոշմամբ սահմանված«Հողերի օգտագործման փոփոխության

սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» դրական եզրակացությունները, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05/

Լսեցին

***ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ***

/ԶԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտները անվանել և վերանվանել համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 06/

Լսեցին

***ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ***

/ԶԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ,76-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, համայնքի հողերի օգտագործման սխեմային համապատասխան, համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել՝աճուրդ-վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,

2.Տրամադրել վարձակալության կամ կառուցապատման իրավունքով՝համաձայն հավելված 2-ի:

3.Համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 14-ի «Ակունք համայնքի

սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման և օգտագործման տրամադրելու մասին» թիվ 49 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1)որոշման 2-րդ կետի հավելված 4-ում «Գյուղատնտեսական»բառը փոխարինել «Գյուղատնտեսական,Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» բառերով,
2) որոշման 2-րդ կետի հավելված 4-ում «Արոտավայր»բառը փոխարինել«Արոտավայր 3.369388 հա,ընդերքի օգտագործման համար նախատեսված3.59272հա» բառերով:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 07/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

*ՀՈՒՆԱՆ ԹՈՒՐՇՅԱՆ*

*Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մելքումյանը*